ՈՐՈՇՈՒՄ

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան 30 սեպտեմբերի 2008թ.

Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի 2-րդ դատական կազմը

Նախագահությամբ՝ Ֆ.Թոխյանի
Անդամակցությամբ՝ Հ.Դանիելյանի
Հ.Նազարյանի

Քննության առնելով ՀՀ քաղաքացի Ռուբեն Թորոսյանի N 6-88 դիմումի ընդունելիության հարցը

ՊԱՐԶԵՑ

1. Ռուբեն Թորոսյանը 17.09.2008 թվականին դիմել է Սահմանադրական դատարան վիճարկելով «ՀՀ ընտրական օրենսգրքի» 63.2 հոդվածի 3-րդ կետով և 40.1 հոդվածի 3-րդ կետի 3-րդ պարբերությամբ սահմանված դրույթների սահմանադրականությունը:

2. ՀՀ Սահմանադրության 101 հոդվածի 6-րդ մասին, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69 հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ անձը՝ համապատասխան պահանջով ՀՀ սահմանադրական դատարան կարող է դիմել միայն այն դեպքում, երբ սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները:

3. Դիմողի կողմից վիճարկվող «ՀՀ ընտրական օրենսգրքի» 63.2 հոդվածի 3-րդ կետով և 40.1 հոդվածի 3-րդ կետի 3-րդ պարբերությամբ սահմանված դրույթները նրա նկատմամբ կիրառվել են ՀՀ Վարչական դատարանի 2008 թվականի օգոստոսի 1-ին թիվ ՎԴ/1928/05/08 և թիվ ՎԴ/1928/05/08 վարչական գործերի վերաբերյալ կայացրած վճիռներով: ՀՀ Դատական օրենսգրքի 35 հոդվածի 2-րդ մասին համաձայն՝ «Վարչական դատարանի վճիռները կարող են բողոքարկվել միայն վճռաբեկության կարգով»: ՀՀ Վարչական դատարանի վերը նշված վճիռները վերջնական դատական ակտ չեն, քանի, որ ենթակա են բողոքարկման: Սակայն դիմողը այդ վճիռները վճռաբեկության կարգով չի բողոքարկել, ուստի և չի սպառել դատական պաշտպանության բոլոր միջոցները:

Ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» օրենքի 32 հոդվածով, 69 հոդվածի 1-ին և 7-րդ մասերով, ՀՀ սահմանադրական դատարանի կանոնակարգի 25 հոդվածի «զ» կետով սահմանադրական դատարանի 2-րդ կազմը

ՈՐՈՇԵՑ

Ռուբեն Թորոսյանի՝ «ՀՀ ընտրական օրենսգրքի» 63.2 հոդվածի 3-րդ կետով և 40.1 հոդվածի 3-րդ կետի 3-րդ պարբերությամբ սահմանված դրույթների սահմանադրականությունը վիճարկելու մասին դիմումի հիման վրա գործի քննությունը մերժել:

նախագահող՝ Ֆ.Թոխյանի

անդամներ՝ Հ.Դանիելյանի

Հ.Նազարյանի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅՈՒՆ